

ործորոցի վրայ կանգնած, բարկացած չի համբերում, խփում է նրա երեսին, հրում օրօրոցի վրայից և առնում է օրօրոցը ուսին, որ երեխին ազատի: Դրա համար է, որ մօր անէծքը որդուն չի բռնում, իսկ հօր անէծքը, ո դա մեծ բան է, վայ այն որդուն, որ հօր բարկութիւնը կը շարժի և հօր անէծքին կարժանանայ, հօր անէծքը անպատճառ կը բռնէ:

Կամ: Հին ժամանակ կաթը եփելիս՝ ինչքան որ վեր ելել, աւելացել է, սառչելիս էլ նոյնքան է մնացել, չի պակսել: Բայց մէկ անգամ մի պառաւ կաթը եփելիս՝ եռ եկած ժամանակ մօտը չի եղել, կաթը բարձրացել, մի քիչ թափուել է: Դրա վրայ պառաւը չի համբերել. բարկացած թքել է վրան: Դրանից է, որ հիմա կաթի «բէրեքէթը» կորել է, և եփալիս՝ աւելանում է, բայց սառչելիս՝ էլի պակսում է:

«Կաշութը «եղի պահէ»»: Այս խօսքերը առածի տեղ են բանում. նշանակում է, որ ինչ չափով որ չափես, քեզ էլ այնպէս կը չափեն: Աւանդութեամբ՝ իբր թէ հին ժամանակ ծերացածներին կալաթով ձորն էին զցում: Մարդու մէկը երբ իր պառաւ մօրը կալաթն է դնում, որ ներքեւ դլորի, մալրը կալաթից ձայն է տալիս, թէ «որդիս, կալաթը քեզի պահէ»: Այդ խօսքերից որդին զգացում է, միտքը բացւում և մօրն ազատում մահից:

## VII. Եղանակի գուշակութիւններ

Նոր-պարու օբեր: Նոր տարու առաջին օրից մինչև 12, նայած թէ որ օրը ինչ եղանակ է, նրանց համապատասխան ամիսներն էլ այնպէս կանցնեն: Առաջին օրը՝ յունսաւարն է. 2-դր՝ փետրուար և ալլն. 12-դը—վերջի ամիսն է: Այսպէս՝ թէ որ առաջի օրը պարզ լինի, առհասարակ ամիսն էլ պարզ կանցնի. թէ որ յունսաւարի 12-ին ձիւն գայ, գեկտեմբերն էլ ձիւնով կանցնի:

«Վարդելէ»: Փետրուարի 18-24 սկսում է հիւսիսային ու հարաւային քամիների կոյիւը: Կոյիւը տևում է մինչև փետրուարի 24-ի գիշերը, յաղթութիւնը ալր վերջի գիշերիցն է

կախուած, նայած թէ որ կողմի քամին է փչում: Թրանից է կախուած ամբողջ 40 օրերի եղանակը: թէ որ վերջի զեշերուան քամին հիսխիցն է, նշանակում է՝ էլի ամբողջ 40 օր, մինչև ապրելի 5, ցուրտ ու ձմեռ ոլիտի լինի: Հակառակ՝ հարաւային քամին գարնան ու տաք օրերի նշան է համարում: Դրան թուրքերէն բառով «վաղալի» (ժամանակի քամի) են ասում: Այդ բանը ամենքը գիտեն և շատերն էլ ընդունում են, բայց այնքան հետաքրքիր կերպով ոչ հսկում են, ոչ էլ հետեւում քամուն, շատերը մտքին չեն պահում ամսաթիւը և մոռանում են հսկելը:

Իրանց ասելով հայրենիքում, Անատօլիական ափերում, այդ բանին աւելի մեծ նշանակութիւն են տուել: Անտեղ հովիները վերջին գիշերը յատուկ հսկումներ են արել, իմանալու համար թէ քամին որ կողմից է փչում: Պատահել է որ երբմն թոյլ փչած ժամանակ չէ իմացուել թէ որ կողմի քամին է: Դրա համար այդ գիշերը մինչև լոյս հովիները չեն քնել. սարի գլխին մի ահազին խարոյի վառելով՝ աշխատել են գտնել քամու ուղղութիւնը: Մեծ ուրախութիւն է եղել նրանց համար, թէ որ քամին հարաւից է փշել («կըրլա»): Միւս օրուանից ճամպայ են ընկել՝ սարը (եալլա) գնալու, քանի որ նշանը նրանց ցոյց է տուել, որ ցըտից էլ վախ չկայ: Թէ որ հակառակ՝ քամին հիսխիցն է եղել, 40 օր էլ տեղից չեն շարժուել, մնացել են ցածրերում՝ մինչև չարագուշակ օրերի լրանալը:

Մարտի 9: Այդ օրից է սկսում «կուկուն» կանչել: Դայլն էլ այդ օրը գնում է լողանալու: Թէ որ օրը պարզ լինի, կը ցամքի, թէ չէ թաց կը մնայ: Գայլի ցամքուելուց ու թաց մնալուց, կամ ուրիշ խօսքով՝ այդ օրուան եղանակից է կախուած ամբողջ ամառուան վիճակը: Թէ որ այդ օրը պարզ լինի, ամառն էլ չոր-երաշտ կանցնի. իսկ թէ որ անձրեսու՝ ամառն էլ անձրևով կանցնի:

Նշաններ 1. Կատուի աչքերը որ սևանան, պղտորուին, անձրև. կը գայ:

2. Կատուն որ երեսը լուանայ, անձրև. կը գայ:

3. «Ղիափները» (չախկալ) որ շատ կանչեն, անձրեւ մօտիկ կը լինի:

4. Հաւը որ քթթուի, անձրեւ կը գայի:

5. Ցերեկով որ գորտը կրկռայ՝ անձրեւ կը լինի:

6. Ճատ որ անձրեւ և «ղիափը» կանչե՞ օդը պիտի բացուի:

7. Կատուն որ երեսը կրակին դարձնի, ցուրտ պիտի անէ:

8. Կատուի բերը թէ մեծ լինի, ցուրտ շատ կը լինի:

9. Լուսնի եղջրւրները թէ վեր դարձած լինին, այն ամիսը երաշտ կանցնի. Խակ թէ ներքեւ՝ անձրեւ շատ կը գայի:

10. Եօթը տարին մէկ անգամ լուսաստղը լիտ է մնում, (առաւօտները ուշ է երեսում և իր տեղում չի լինում). լիտ մնացած տարին ձիւն քիչ կը գայի:

11. Ասում են թէ՝ որ տարին որ անտառում կաղին, շազանակ և առհասարակ վայրի պտուղներ շատ են լինում, այն տարին ձմեռը խիստ է լինում:

### VIII. Աշխարհի եւ ազգեր:

Աշխարհու բնույթը վրայ է իտակուած: Աշխարհքի տակի հիմքը մի եղան վրայ է կանգնած: Եզր երրոր պառկի, աշխարհքը վրան պիտի քանդուի: Ասուուած դրա համար մի ճանձ է դրել, որ եղան չորս կողմը տղտղում, ման է գալիս. թէ որ եզր պառկել ուղենայ, նրան պիտի կճէ: Եզր դրա վախից չի պառկում և աշխարհքը կանգնած մնում է:

Ասողներ էլ կան թէ աշխարհքը կարմիր եղան «կօտեօշի» (եղջրւր) վրայ է կանգնած:

Եկի ասում են, թէ աշխարհքը գրկած պահում է մի մեծ ձուկ եր գլխով ու պոչով, որոնք իրարից շատ հեռու չեն: Գլուխը համարեա մի թիզ միայն հեռու է պոչից: Բերանը միշտ աշխատում է, որ պոչը կտրի, ուտի, բայց չի կարողանում: Որ ժամանակ որ պոչը կտրուի, աշխարհքը դուրս կը պրծնուի ու կը կործանուի:

Աշխարհի վերջը: Վերջի երեք օրին օր ու գեշեր կրակէ անձրեւ պիտի գայի: